

ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՈՐՈՇ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Հայկ Սուքիասյան

Քաղաքական գիտությունների թեկնածու

Հետխորհրդային տրանսֆորմացիայի հիմնախնդիրը ժամանակակից հասարակական և քաղաքական գիտություններում ամենաքննարկվող, վիճելի և բարդ խնդիրներից է: Խնդրի բարդությունը և ոչ միանշանակ լինելը պայմանավորված են ոչ միայն այն հանգամանքով, որ մինչ այդ գոյություն ունեցող տրանսֆորմացիաները կամ անցումները ուսումնասիրող քաղաքագիտական տեսությունները, ինչպիսիք են՝ տրանզիտալոգիան¹ (անցումագիտություն), ժողովրդավարացման երեք ալիքների տեսությունը² անգոր գտնվեցին հոտագոտելու այս գործընացը, այլև հատկապես այն հանգամանքով, որ հետխորհրդային տրանսֆորմացիան իր ձևով և բովանդակությամբ ամբողջապես տարբերվում էր տրանսֆորմացիայի և ժողովրդավարական անցման նախկին ձևերից: Ինչպես նշում է Տ. Թորոսյանը՝ այն եզակի է և աննախադեպ³: Հենց այս պատճառով էլ այս հիմնախնդիրը ուսումնասիրող մեթոդաբանությունները և տեսությունները ժամանակի ընթացքում սկսեցին երթարկվել քննադատության:

Հետխորհրդային տրանսֆորմացիայի բազմաթիվ երկրներում ժողովրդավարության անցման գործընթացը ամենին էլ չհանգեցրեց ժողովրդավարական վարչակարգերի հաստատմանը, և անցումային հասարակությունների վերլուծությունը և հետխորհրդային տրանսֆորմացիաների առանձնահատկությունների վերհանումը ժամանակակից հասարակական և քաղաքական գիտություններում դարձան միջառարկայական հետազոտության օբյեկտ:

1990-ական թվականների սկզբներին հետխորհրդային տարածությունում սոցիալական և քաղաքական փոխակերպումները սկսե-

¹ I. Gans-Morse J. Searching for Transitologists: Contemporary Theories of Post-Communist Transitions and the Myth of a Dominant Paradigm. "Post-Soviet Affairs", 2004, vol. 20, № 4, p. 320-349; 2. Møller J. Conceptualising democracy within the post-Soviet setting: A typology of political regime forms. "Politicon The IAPSS Journal", issue 9, April 2005, p. 5-19.

² ХАНТИНГТОН С. Третья волна. Демократизация в конце XX века. М., 2003. С. 354.

³ Թորոսյան Տ. Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա: Եր., «Գիտություն» հրատ., 2006, էջ 5:

ցին ուսումնասիրվել տարբեր տեսությունների՝ տրանզիտալոգիայի, Մ. Հանթինգտոնի «Երեք ալիքների»⁴ տեսության, անցման տեսության⁵ շրջանակներում: Ի սկզբանե տրանզիտալոգիայի տեսությունը⁶ հետխորհրդային տրանսֆորմացիաների հետազոտության համար կիրառվող առաջնային տեսություններից էր, և դա պատահական չէր, քանի որ խորհրդային միության փլուզումից հետո հետխորհրդային երկրները որդեգրել էին ժողովրդավարության ուղին: Մակայն հետագայում լավատեսական միտումները նվազեցին, քանի որ այդ երկրներում ժողովրդավարացման գործընթացները ընթացան ոչ գծային տրամաբանությամբ, այսինքն՝ տեղի չունեցավ ուղղակի անցում ավտորիտարիզմից կամ տոտալիտարիզմից ժողովրդավարության: Եվ պարզ դարձավ, որ տրանզիտալոգիայի տեսությունը այլևս չի կարող սպասարկել հետխորհրդային տրանսֆորմացիայի հետազոտությունները: Պատճառները բազմաթիվ են:

Ինչպես նշում է Ա. Մելվիլը՝ «բազմաթիվ հետազոտողներ, նկարագրելով և վերլուծելով աշխարհում քաղաքական զարգացումը, ժամանակակից քաղաքական փոխակերպումները ընկալում էին բացառապես պարզ գծային տրամաբանության շրջանակներում՝ անցում ավտորիտարիզմիվ դեպի կոնսուլիդացված ժողովրդավարություն»⁷:

Ըստ Ն. Գարենայի՝ հետխորհրդային տրանսֆորմացիայի ուսումնասիրության հարցում արևմտյան հետազոտողները հանգում են այն եզրակացության, որ տրանսֆորմացիայի ընդհանուր տեսական դրույթները, օրինակ՝ անցումը ոչ ժողովրդավարականից ժողովրդավարական վարչակարգի, այս երկրներում չեն գործում և անհրաժեշտ են այլ մոտեցումներ⁸: Այս տեսակետը պաշտպանում է նաև Վ. Գելմանը, ով նշում է, որ հետխորհրդային հասարակությունների քաղաքական տրանսֆորմացիայի վերլուծության համար ժողովրդավար-

⁴ Хантингтон С. Третья волна. Демократизация в конце XX века. М., 2003. 354 с.

⁵ Мельвиль А. Демократические транзиты, транзитологические теории и посткоммунистическая Россия / А.Ю. Мельвиль // Политическая наука в России: интеллектуальный поиск и реальность: Хрестоматия / Отв. ред.сост. А.Д. Воскресенский. – М.: МОНФ; ООО «Издательский центр научных и учебных программ», 2000. С. 337-368:

⁶ Gans-Morse J. Searching for Transistologists: Contemporary Theories of Post-Communist Transitions and the Myth of a Dominant Paradigm. “Post-Soviet Affairs”, 2004, vol. 20, № 4, p. 320-349.

⁷ Мельвиль А. О траекториях посткоммунистических трансформаций. Полис. 2004. № 2. С. 65.

⁸ Гареева Н. Структурные и процедурные подходы как методологическая основа постсоветских политических трансформации. Вестник ВЕГУ, № 4, (48), 2010. С. 129-131.

բացման ընդունված մոդելները ակնհայտորեն բավարար չեն այս երկրներում տրանսֆորմացիոն գործընթացները հասկանալու համար: Ընդ որում՝ պարզ չէ նաև այն, թե որքանով են այդ տեսությունները կիրառելի հետխորհրդային տրանսֆորմացիաները բացատրելու համար⁹: Այս համատեքստում Տ. Կարոզերսը նշում է, որ հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների փորձի ուսումնասիրությունը տրանզիտալոգիայի տեսության միջոցով այլևս անարդյունավետ է և դրանից պետք է հրաժարվել¹⁰:

Ն. Դանիլովը նշում է, թե արդյո՞ք անցման գործընթացում մենք հաշվի ենք առնում ազգային և մշակութային առանձնահատկությունները յուրաքանչյուր պետության հետխորհրդային փոխակերպումը կամ հետխորհրդային ժողովրդավարացումը բացատրելու համար, թե պարզապես փորձում ենք ամբողջ հետխորհրդային տրանսֆորմացիան բացատրել կամ հետազոտել ընդհանուր օրինաչափություններով¹¹: Օրինակ Լ. Նիկոլսկայան գտնում է, որ ռուս հասարակության համար կիրառելի չէ արևմտյան գաղափարների և քաղաքական պրակտիկայի մեխանիկական կրկնությունը¹²: Այս գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել սեփական սոցիալ-մշակութային առանձնահատկությունները: Կարծում ենք՝ հետխորհրդային տրանսֆորմացիայի բացատրության Նիկոլսկայայի այս մոտեցումը բանականաչափ հիմնավորված է, քանզի ժողովրդավարությունը պայմանավորվում է նաև տվյալ երկրի մշակութային առանձնահատկություններով, ընդունված քաղաքական փորձով և պետության կառուցվածքով (օրինակ՝ ամերիկյան ժողովրդավարությունը չի կարող նույնությամբ կիրառվել այլ երկրներում՝ առանց հաշվի առնելու դրանց առանձնահատկությունները):

Ըստ Վ. Մարտյանովի՝ տրանզիտալոգիայի տեսությունը հետխորհրդային տրանսֆորմացիան դիտարկում է բացառապես արևմտյան ունիվերսալ մոդելների շրջանակներում, որոնց պետք է ձգտեն

⁹Гельман В. Постсоветские политические трансформации. Наброски к теории. Полис, 2001. № 1. С. 15-29.

¹⁰Карозерс Т. Трезвый взгляд на демократию. Pro et Contra. № 1 (28). 2005. С. 73-80.

¹¹Данилов А. Постсоветские трансформации: уроки для будущего. Социология. 2005. № 4. С. 23.

¹²Никовская Л. Проблемы и особенности демократической трансформации в современной России. [Электронный ресурс] <http://rapn.ru/?group=573&doc=1661/16.11.2013/>.

հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրները: Եվ այս մոդելից յուրաքանչյուր շեղում տրանզիտալոգիայի տեսության շրջանակներում դիտարկվում է որպես ժամանակավոր պաթոլագիա¹³: Իսկ անցումն էլ պայմանավորված է բացառապես տեխնիկական խնդիրների, պայմանների, միջոցների և ժամանակի գործոններով: Այս մոդելի հիման վրա ստեղծվում են տրանզիտալոգիայի տարբեր մոդելներ՝ «ալիքային», «երկրորդ փորձ», «ընդհատված ժողովրդավարություն», «ուղղակի անցում» և այլն¹⁴:

Մեկվիլը, գնահատելով հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում վերջին տարիների քաղաքական գործընթացները, հիմնավորում է այն միտքը, որ ինստիտուցիոնալ կայունությունը և վարչակարգային կոնսոլիդացիան շատ հեռու են կոնսոլիդացված ազատական ժողովրդավարությունից¹⁵: Կարծում ենք՝ հեղինակի այս մոտեցումն արդիական է նաև այսօր, քանի որ հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում տրանսֆորմացիայի գործընթացները տեղի են ունենում տարատեսակ ելևէջներով, այսինքն՝ քաղաքական իշխանության փոփոխություններն ազդում են նաև քաղաքական վարչակարգի առանձնահատկությունների վրա՝ խոչընդոտելով կոնսոլիդացված քաղաքական վարչակարգի ձևավորմանը: Սա է պատճառներից մեկը, որ հետխորհրդային երկրներում այսօր հիմնականում գործում են հիբրիդային վարչակարգեր¹⁶:

Ըստ Կարոզերսի՝ հետխորհրդային տրանսֆորմացիայի արդյունքում ձևավորվեցին դեկզատիվ ժողովրդավարություններ¹⁷, որոնք իրենցից ներկայացնում են ոչ միայն որոշակի հիբրիդային քաղաքական վարչակարգեր¹⁸, որոնք համակցում են ժողովրդավարական և ավտորիտար վարչակարգերի առանձին տարրեր և հատկանիշներ,

¹³ Мартянов В. Конец транзитологии: Что дальше? [Электронный ресурс] <http://novyn.kpi.ua/2011-2/34-filos-Shapoval.pdf> /15.11.2013/.

¹⁴ Гуторов В. Современная российская идеология как система и политическая реальность. Методологические аспекты. ПОЛИС, 2001, № 3. С. 73.

¹⁵ Мельвил А. О траекториях посткоммунистических трансформаций. Полис. 2004, №2. С. 70.

¹⁶ Beichelt T. Forms of Rule in the Post-Soviet Space: Hybrid Regimes, /German Institute for International and Security Affairs, Germany. 2011.

http://www.kuwi.europauni.de/de/lehstuhl/vs/politik3/Dokumente/publikationen/SWP_hybrid_regimes_in_the_post-soviet_space_8-2010.pdf /10.12.2013/.

¹⁷ Карозерс Т. Конец парадигмы. Полит. наука, 2003. №2. С. 49:

¹⁸ Diamond L. 2002. "Thinking About Hybrid Regimes," Journal of Democracy, 13(2), p. 21-35.

այլն կեղծ ժողովրդավարություններ, որոնք միայն նմանակում են ժողովրդավարության որոշ ձևական հատկանիշներ (օրինակ՝ ընտրություններ և բազմակուսակցական համակարգ)¹⁹: Ըստ Վ. Մարտյանովի՝ հետազոտողները, ովքեր կիրառում են տրանզիտալոգիայի տեսությունը, արդեն նախօրոք պնդում են, որ անցումը պետք է հանգեցնի ժողովրդավարության: Այս համատեքստում տրանզիտալոգիան որպես պատմական գործընթացի ընկալման հարացույց, մեղադրվեց արդյունքների և պատմական գործընթացի կանխատեսման մեջ, որն այս դեպքում հանգում էր արևմտականացման²⁰: Այս դեպքում նրանք, ովքեր կիրառում են տրանզիտալոգիայի մեթոդաբանությունը վերածվում են հետազոտողներից գաղափարախոսների, ովքեր զբաղված են արևմտյան արժեքների, քաղաքական ինստիտուտների մեխանիկական փոխառման գործընթացով:

Տրանզիտալոգիայի՝ որպես մեխանիկական մեթոդի վառ ապացույց կարող է լինել Ս. Թորոսյանի այն մոտեցումը, որ պարզունակ արևմտյան մոդելներն առանց լրացուցիչ դժվարությունների փորձում էին լուծել հետխորհրդային տրանսֆորմացիայի խնդիրը, սակայն հետագա ընթացքն առաջացրեց լուրջ սոցիալական ցնցումներ, քաղաքական բևեռացում և այլն²¹: Բացի այդ՝ տրանզիտալոգիայի՝ միակողմանի «անցում ոչ ժողովրդավարական վարչակարգերից ժողովրդավարականի» մեխանիկական գործառնությունը հնարավորություն չի տալիս ուսումնասիրել այս խնդիրը: Այս համատեքստում, ինչպես իրավացիորեն նշում է Ս. Թորոսյանը, մեխանիստական մտածողությունը, (այս դեպքում մեթոդը, ընդգծումն իմն է՝ Ն. Սուքիասյան), կիրառելի չէ համակարգային փոփոխությունների ուսումնասիրության ժամանակ²²:

Հետխորհրդային տրանսֆորմացիայի հիմնախնդիրն ուսումնասիրվել է նաև Ս. Հանթինգտոնի «Ժողովրդավարացման 3-րդ ալիքի»

¹⁹ Мельвиль А. Транснационализация мировой политики и ее «противофазы». Политическая наука в современной России: время поиска и контуры эволюции. М., 2004., с. 136-137.

²⁰ Шабасова М. Транзитология как научный подход и идеология. Минск, БДУ. 2009. С. 199.

²¹ Թորոսյան Ս. Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա: Եր., «Գիտություն» հրատ., 2006, էջ 34:

²² Թորոսյան Ս. Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա: Եր., «Գիտություն» հրատ., 2006, էջ 40-43:

տեսության²³ լույսի ներքո: Այս տեսության համաձայն՝ Խորհրդային Միության փլուզումը ժողովրդավարացման համաշխարհային գործընթացի մասն է կազմում, որը սկիզբ էր առել 1974թ. պորտուգալական հեղափոխությունից և հետագայում տարածվել Լատինական Ամերիկայի երկրներում: Սակայն այս տեսության դիտարկումը հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների պարագայում հետազոտողներից ոչ մեկն այլևս ճշմարիտ չի համարում: Մասնավորապես՝ նրանք նշում են, որ սխալ կլինի հետխորհրդային անցումը սահմանափակել միայն ժողովրդավարացման գործընթացով, քանի որ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, ինչպես նաև նախկին խորհրդային ասիական հանրապետությունները կանգնած են երկակի անցման շեմին՝ նկատի ունենալով փոխակերպումները և՛ քաղաքական, և՛ տնտեսական ոլորտներում: Ֆ. Ռոդերն այս երկուսին ավելացնում էր նաև երրորդ անցումը՝ կարևորելով ազգային փոխակերպումը, ինչը ենթադրում է ազգային պետությունների ձևավորում²⁴: Ըստ Տ. Թորոպյանի՝ ժողովրդավարացման գլոբալ միտումների երրորդ ալիքի շրջանակներում հետխորհրդային տրանսֆորմացիայի դիտարկումը մի շարք դեպքերում չկարողացավ դրանք գերծ պահել հետընթաց զարգացումներից: Ավելին՝ այն գծել է երկու տարամիտվող ճանապարհ, որոնցից մեկը տանում է դեպի ժողովրդավարության կայացում, մյուսը՝ դեպի ավտորիտարիզմ կամ ամբողջատիրություն²⁵:

Վ. Ֆեդոտովան փորձում է հետխորհրդային տրանսֆորմացիաները դիտարկել նոր մոտեցմամբ՝ առաջարկելով «догоняющая модернизация»²⁶ տեսությունը, որը հայերեն տարբեր կերպ են թարգմանում՝ հասվեհաս արդիականացում, հետևից վազող արդիականացում: Երբեմն խոսում են նույնիսկ հասվեհաս ժողովրդավարության մասին («догоняющая демократия»): Ակնհայտ է, որ սրանք «ձգած» տեսություններ են և լուրջ կերպով չեն կարող օգնել հասկանալու հետխորհրդային տրանսֆորմացիայի ողջ բարդությունը: Եվ ընդհանրա-

²³ Хантингтон С. Третья волна. Демократизация в конце XX века. М., 2003, 354 с.

²⁴ Roede Ph. People and States after 1989: The Political Costs of Incomplete National Revolutions / P. Roeder // Slavic Review. 1999. vol. 58. № 4. p. 854-882.

²⁵ Թորոպյան Տ. Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա: Եր., «Գիտություն» հրատ., 2006, էջ 96:

²⁶ Федотова В. От догоняющей модернизации к национальной: теоретический аспект.

http://www.perspektivy.info/rus/rus_civ/ot_dogonajushhej_modernizacii_k_nacionalnoj_teoreticheskij_aspekt_2007-12-07.htm [Электронный ресурс] /24.11/2013/.

պես՝ տպավորություն է ստեղծվում, որ հետխորհրդային տրանսֆորմացիան ուսումնասիրող տեսությունները հիմնականում նկարագրական բնույթ ունեն և, այլևս, անգոր են այս խնդրի ողջ բարդությունը ընկալելու և գործընթացներն ուղղորդելու համար: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ հետխորհրդային տրանսֆորմացիան ուսումնասիրող վերը նշված տեսություններն այս գործընթացը չեն դիտարկում որպես առանձին երևույթ՝ մշտապես այն դիտարկելով որոշակի գործընթացների համատեքստում, ինչպիսիք են՝ արևմտականացումը, ժողովրդավարացումը և այլն:

Կարծում ենք՝ հետխորհրդային տրանսֆորմացիայի հիմնախնդրի ուսումնասիրության բարդությունը նաև նրանում է, որ հետազոտողները փորձում են գտնել այս հիմնախնդիրը բացատրող ընդհանրական օրինաչափություններ: Եվ այս համատեքստում հատկանշանակ է Տ. Թորոպսոնի հիմնավորումն այն մասին, որ հետկոմունիստական պետությունները չեն կարող ունենալ դեպի ազատական ժողովրդավարություն տանող մեկ միասնական ուղի²⁷: Սա ամենահակիրճ բացատրությունն է այն մասին, որ այս երկրներում փոխակերպման գործընթացներն ունեն բացառապես այլ դրսևորումներ՝ կապված մշակութային, պետական կառուցվածքի, աշխարհաքաղաքական տարածության գործոնների հետ, և պետք է դրանք հետազոտել առանձին: Եվ հարկ է այս պետություններում տրանսֆորմացիայի հիմնախնդիրները ուսումնասիրել առանձին-առանձին: Հակառակ պարագայում՝ ընդհանրական մոտեցումների կիրառման ժամանակ մենք կունենանք այն նույն պատկերը, որն ունենք վերը նշված մյուս տեսությունների պարագայում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկվում են հետհեղափոխական տրանսֆորմացիայի որոշ տեսական և գործնական հարցեր: Հեղինակի իրականացված հետազոտությունները վկայում են այն մասին, որ հետհեղափոխան տրանսֆորմացիայի գործընթացը ուսումնասիրվում է տրանզիտալոգիայի, ժողովրդավարացման տեսության և անցման տեսության տեսանկյունից: Հարկ է նշել, որ գիտնականների տարաբնույթ մոտեցումները տրանսֆորմացիայի խնդիրներին իրենց ուրույն հետքն են

²⁷Թորոպսոն Տ. Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա: Եր., «Գիտություն» հրատ., 2006, 424 էջ:

թողել հետհեղափոխական տրասֆորմացիայի տեսական և գործնական խնդիրների լուծման վրա: Կարծում ենք, որ հասունացել է պաշտպանական վերախման անհրաժեշտությունը:

Բանալի բաներ - հետհեղափոխական տրանսֆորմացիա, տրանզիտոլոգիա, ժողովրդավարություն, քաղաքական վարչակարգ, պարահիմունք:

О НЕКОТОРЫХ ТЕОРЕТИКО-МЕТОДОЛОГИЧЕСКИХ ВОПРОСАХ ПОСТСОВЕТСКОЙ ТРАНСФОРМАЦИИ

АЙК СУКИАСЯН

Кандидат политических наук

РЕЗЮМЕ

В статье рассматриваются некоторые теоретические и методологические вопросы постсоветской трансформации. Проведенные автором исследования свидетельствуют о том, что процесс постсоветской трансформации исследуется с точки зрения транзитологии, теории демократизации, теории перехода и т.д. Стоит отметить, что разнообразные подходы ученых к проблемам трансформации оставили свой особый след в решении теоретических и методологических вопросов постсоветской трансформации. Мы считаем, что настало время для переосмысления парадигмы.

Ключевые слова: постсоветская трансформация, транзитология, демократия, политический режим, парадигма.

ON SOME THEORETICAL AND METHODOLOGICAL ISSUES IN THE POST-SOVIET TRANSFORMATIONS

Hayk Sukiasyan

Candidate of Political Sciences

SUMMARY

This article discusses some of the theoretical and methodological issues of post-Soviet transformation. The author's research indicates, that the process of post-Soviet transformation is studied from the point of transitology, theories of democratization, transition theory, etc. It should be noted, that a variety of approaches to the problems of the transformation of scientists left their own special mark in solving theoretical and methodological issues of post-soviet transformation. We believe that the time has come to rethink the paradigm.

Key words: post-Soviet transformation, transitology, democracy, political regime, paradigm.